ՄԵՐ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԸ

(Ծննդյան ութսունհինգամյակի առթիվ)

Առաջին տպավորությունը. ինքնատիպ, յուրահատուկ միայն ինքն իրեն նման, իր կարծիքների և տեսակետների մեջ բացարձակապես ազատ ու անկաշկանդ մի մարդ։ Սարոյանն ասում էր այն, ինչ մտածում էր տվյալ րոպեին, իրեն պահում էր այնպես, ինչպես ինքը նպատակահարմար էր գտնում, խոսում էր այն մասին, ինչ ինքը ցանկանում էր և ուրեմն ճիշտ էր համարում։ Դիվանագիտորեն լռել, եթե դիմացինը շարադրում էր մի կարծիք, որի հետ ինքը համաձայն չէ, կամ կրկնել որևէ մեծատիտղոս կամ մեծահամբավ անձի ասածները, կամ համաձայնվել դիմացինի «ասվածքի» հետ, եթե նա պետական մեծություն է և այլն - այսպիսի հասկացություններ չկային Սարոյանի համար։ Այս էր, անկասկած, այն հիմնական պատճառներից մեկը, որի հետևանքով նա շեշտակիորեն տարբերվում էր իր շրջապատի մարդկանցից և, որն էլ առանձնահատուկ վիճակ էր ապահովում նրա համար։ Սրա հետևանքով էր, որ Սարոյանը մշտապես փնտրվող ու որոնվող մարդկանցից էր և նրան անկարելի էր պատկերացնել առանց անընդհատ ուղեկցող համակիրների պատկառելի խմբի։

Խոսք եղավ մի «կենտկոմականի» մասին, որը չէր կարողացել գալ Սարոյանի հետ կայանալիք հանդիպմանը, պատճառ բերելով գլխացավը։

-Է, չհասկցանք, օղուլ,- նկատեց Սարոյանը,- անոր գլխուն մեջ բան չկա, այնտեղ ի՞նչը կցավա։

Խոսակցություն բացվեց մեր կին գործիչներից մեկի մասին։

-Ալամ-աշխարհ նախ կխորհե, նոր միայն կխոսե, բայց անիկա ետքը նոր կխորհե,- կպցրեց Սարոյանը

Եվ այսպես միշտ, և այսպես անվերջ։

Ավելացնենք նաև Սարոյան-մարդու ինքնատիպությունը ընդգծող մի այլ զորեղ հանգամանք ևս. նրա հայերենը։ Այդ լեզուն խորապես «անձնական ստեղծագործություն» էր, բնորոշ էր միայն Սարոյանին ու նրա սեփականն էր, այդ լեզվով երբեք «ոչ մի ժամանակ չի խոսել, առավել ևս, չի գրել ոչ ոք» այդ յուրահատուկ լեզուն էլ, հեղինակի հետ առընդմիշտ բաժանվեց-հեռացավ մեզանից։ Ես չգիտեմ, թե անսահման շնորհակալության ինչպիսի խոսքերով պետք է հիշենք «Վիլյամ Սարոյան» հեռուստատեսային ֆիլմ-ակնարկի հեղինակներին, ովքեր մեզ համար կարողացել են պահպանել ոչ քիչ թվով մեծարժեք կադրեր Սարոյանի վերաբերյալ և դրա հետ մեկտեղ, պահպանել սարոյանական այդ ինքնօրինակ հայերենը։ Հակառակ դեպքում կորուստը, այս հասկացողության թե՛ ամենաուղղակի, և թե՛ ամենաողբերգական իմաստով, կարող էր անվերադարձ լինել։ Այս լեզվի մասին գաղափար կազմելու համար, պատկերացրեք՝ Բիթլիսի բարբառը, իսկ այդ բարբառում մեկից ավելի են բառերն ու ոճերը, որոնք հասկանալի են միայն նեղ-մասնագետներին, ավելացրեք այստեղ կամայական քանակությամբ ընտրված բառեր արևելահայերեն, արևմտահայերեն, անգլերեն ու թուրքերեն լեզուներից, այս բոլորը հոլովեք ու խոնարհեք անբացատրելի մի քերականության նույնքան անբացատրելի օրենքներով ու օրինաչափություններով, և դուք կունենաք ընդհանուր պատկերը այս «խոսողության», որ առօրյա կյանքում գործածում էր Սարոյանը։ Այս ամենին դուք պետք է գոնե տեղյակ լինեիք՝ հասկանալու

համար, որ «շատ կախորժեմ բիսիկլեթ» նախադասության մեջ օգտագործված է անգլերեն «բայսիքլ» բառը, որը նշանակում է հեծանիվ և որին հենց այնպես ավելացվել է «ետ» վերջավորությունը, պիտի կռահեիք, որ «իմ գրություն անոնք թալաթոսեցին»-ի մեջ կիրառված է միայն Բիթլիսի բարբառին հատուկ «թալաթոսելը», որ նշանակում է աղճատել, որ «ես փոքրկուց բերբերասեր եղած եմ» արտահայտության մեջ անհասկանալի թուրքերեն «բերբեր» բառն է, որ նշանակում է վարսավիր և այդ թուրքերեն բառը, բարդացվել է միայն սարոյանական քերականությամբ ընդունելի «սիրել» հայկական արմատով և այլն: Պիտի ինչ-որ ձևով և ինչ-որ տեղից իմանայիք, որ Սարոյանի համար շատ առօրեական ասված՝ «Ձեր քաղաքը պատվական է, բայց քաղաքի մեջ ինչո՞ւ շավռավոկներ քիչ են» հարց-նախադասության մեջ «շավռավոկը» Բիթլիսի բարբառում առկա սովորական բառ է, որ նշանակում է չղջիկ: Իսկ «Ձեր մայրեր երեխաներ սայլակներու մեջ կօրորեն: Սայլակ լավ չէ, ծանձրմակ ավելի պատվական է» խոսքում «ծանձրմակը» մեր ցանցաճոճն է (գամակ), և նույնիսկ դժվար էր ասել, թե այդ բառը որտեղից էր Սարոյանի բառապաշարում:

Պիտի իմանայիք...

Սկզբում, մանավանդ անփորձ խոսակցի համար այս ինքնատիպ հայերենը հասկանալը դժվարությունների տեղիք էր տալիս: Այդպիսի դեպքերում Սարոյանը խոսակցի դեմքին էր բևեռում իր միամիտ-մանկական այնքան հատկանշական հայացքը, որին էլ իսկույն հետևում էր նույնքան միամիտ-զարմացական հարցումը.

-Չհասկցա՞ր: Ինչո՞ւ, օղուլ: Դուն ինչ է, հայ չե՞ս:

Սարոյանը մտքով անգամ չէր անցկացնում, որ իր հայերենը ինչ-որ այնպիսին չէ, կամ իր օգտագործած բառերն ու արտահայտությունները շատ էլ ճիշտ չեն և կանոնավոր հայերեն իմացողի համար նրա լեզուն հասկանալը զգալի բարդությունների հետ է կապվում: Նա՝ Վիլյամ Սարոյանը խոսում էր հայերեն և, իրեն պետք է հասկանային: Վերջ:

...Փոքրահասակ մի տղա գլխարկը գցել էր ծառի բարձր ճյուղին և իջեցնել չէր կարողանում: Սարոյանը նկատեց.

-Ծառը, ծառը,- ավտոմեքենայի պատուհանից մինչև գոտկատեղը դուրս կախվելով, ամբողջ փողոցով կանչեց Սարոյանը,-Ծառը ժխմե, օղուլ:

Փոքրիկը տարակուսալից-հարցական հայացքով նայեց մեքենային, ապա պատուհանից դուրս կախված մարդուն:

-Ծառը աղվոր ժխմե, ժխմե,-էլ ավելի բարձր որոտաց Սարոյանը,-ինչո՞ւ ինձ կաշես, տղա՛: Ծառը ժխմե, ժխմե քեզի կասեմ:

Եվ երբ մեքենան առաջ անցավ ծառից և այն «ժխմել» չկարողացող տղայից, ու երբ ասացինք, որ փոքրիկը չհասկացավ Սարոյանի հայերենը, հետևեց հենց այն զարմանքախառն հայացքն ու հարցը, որին սպասում էինք.

-Չհասկցա՞վ: Ինչո՞ւ: Անիկա հայ չէ՞ր, որ իր լեզուն չգիտեր:

...Ծանոթությունը տեղի ունեցավ Մատենադարանում, տնօրեն Լևոն Խաչիկյանի միջոցով ու նրա ջանքերով:

-Ի՞նչ է քո գրածի ֆորմ,- ձեռքսեղման արարողությունը հազիվ ավարտած՝ շեշտակի հարցրեց Սարոյանը:

Այդ հայերենն անծանոթ չէր ինձ, քանզի լսել էի Վարպետի ելույթը ռադիոյով, իսկ դրանից մի քանի օր հետո՝ հեռուստատեսությամբ։ ՈՒստի որոշեցի պատասխանել «սարոյանավարի»։

-Կրիտիկ կընեմ։

Խոսակցիս դեմքին պարզ հիասթափություն գծագրվեց։

-Է՜, չեմ ախորժեր կրիտիկ,- նույն դժգոհ-հիասթափված դեմքով մի քանի քայլ հեռացավ ինձնից, - պարապ գործ է։

- Բայց Վարպետ,- ասացի ես,- երբ կրիտիկը բացատրում է, թե արձակագիր Վիլյամ Սարոյանը անգլիացի որ գրողին է հաջորդել, թե իր նախորդի համեմատությամբ նա ինչ նոր բաներ է բերել գրականություն, թե այդ բերած նորություններն ինչ արժեք ունեն...

- Այ քեզի խենթ-խելառ մանչ,- ինձ կտրուկ ընդհատելով մոտեցավ Սարոյանը ու սկսեց սովորեցնողի տոնայնությամբ, - ատիկա հիստորի կրիտիկն է, չե՞ս հասկնար։ Հիստորի կրիտիկ պատվական է, շատ պետք է մեզի համար, բոլոր-բոլորի համար, աշխարհի համար, - նա մի պահ լռեց, հավաքեց մտքերը,- թե չէ՝ կրիտիկ կգրե. Վիլյամ Սարոյան աս միտք լավ տված է, սա նկարագրություն գեղեցիկ արած է, սա բնություն հաջող է, - խոսակիցս դարձյալ հեռացավ մի քանի քայլ, - է, ես իմ գրություններ որ գրած եմ, ես չեմ գիտե՞ր, թե հոն ինչ է լավ, ինչը՝ պատվական։ Ադ ուրիշ մեկը ինձի պիտի ըսե՞։

Կարճատև խոսք «տալ-առնելուց» հետո որոշեցինք. «Կրիտիկ անօգուտ զբաղմունք է, պարապ գործ։ Կարևորն ու պատվականը հիստորի կրիտիկն է»։

Իսկ Մատենադարանը մեծ շուքով պատրաստվել էր դիմավորելու Սարոյանին և, ի թիվս այլ նախապատրաստությունների, ընդունելության դահլիճում նրան ցույց տվեցին մի քանի ընտիր ձեռագրեր, որոնք գրվել էին նրա ծննդավայրում՝ Բիթլիսում։ Մեծապես զգացվեց, հուզվեց Սարոյանը, դեմքը ու, մանավանդ, աչքերը շողացին ներքին ալեբախումներից։ Դողացող ձեռքերով սկսեց զգուշորեն թերթել այդ ձեռագրերից «ամենապատվականը», չթաքցրած հաճույքով նայեց գեղեցիկ նախշագրերին ու նկարազարդումներին և հանկարծ դառնալով Մատենադարանի տնօրենին՝

-Լևոն, օղուլ, աս մեկ պատվական ձեռագիր ինձի տուր։ Հետս տանեմ Ամերիկա, տանեմ իմ քաղաք։

Եվ որովհետև Լևոնը՝ ականավոր պատմաբան-աղբյուրագետ, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը ընդամենը մեղմ ժպտում էր, քանզի Մատենադարանից ձեռագիր «վերցնելն» ու այն էլ «Ամերիկա տանելը» այնպիսի դժնդակ խոսակցություն էր, որ նույնիսկ չէր կարելի վատ անեկդոտ անգամ համարել, ապա Սարոյանի մոտ ստեղծվեց այն տպավորությունը, որ իր խնդրանքը կարող է իրականություն դառնալ։ ՈՒստի եռանդով շարունակեց.

-Լևոն, Լևոն, ոտքդ պագնեմ, աս մեկ ձեռագիր շատ կփափագեմ։ Տանեմ Ամերիկա, դնեմ շրջանակի մեջ, Բիթլիսի բոլոր հայեր կուգան տեսնելու։ Ամերիկայի բոլոր հայեր, մեծեր, չոճուխներ կուգան-կտեսնեն, ինոնց մեջ հայություն կամրապնդվի, հայություն կզորանա։

Եվ, վերջապես, որպես եզրակացություն.

-Գործը լմնցուցինք,- ձեռագիրը տիրոջ իրավունքով մոտեցրեց իրեն,- այս մեկ կտանեմ։

Լևոն Խնչիկյանի մեղմ ժպիտը շեշտակիորեն փոխվեց տագնապալից անհանգստության։ Այդ ջղաձիգ անհանգստությունը որոշակիորեն գծագրվեց նաև ներկաներից շատերի դեմքերին ու աչքերում, և դժվար էր ասել, թե ինչպիսի զարգացում կստանային դեպքերը, եթե խոսակցությանը միջամուխ չլիներ Մատենադարանի աշխատակիցներից մեկը։

-Վարպետ,- վախվորած սկսեց նա,- բայց սահմանապահները չեն թողնի, որ դուք ձեռագիրը սահմանով անցկացնեք, որովհետև չտպագրված գործը...

Սարոյանի դեմքը մտահոգ արտահայտություն ստացավ։

-Սա չոջուխն իրավ կըսե։ Սինորի (իմա՝ սահմանի-Ս.Շ.) վերա ինձի չեն թողնի անցնել։

-Իհարկե, իհարկե,- չորս կողմից վրա տվեցին ներկաները,- ձեռագիրը սահման անցկացնել չի կարելի... սահմանապահները կարգելեն... միայն տպագիր գործերը կարելի է սահման անցկացնել... սահմանի վրա խստությունները ուժեղ են...

Իրավիճակի զավեշտականությունը պատկերացնում եք, այնպես չէ՞։ Մատենադարանից հենց այնպես ձեռագիր վերցնելը «հարց չէր», հարցը միայն «սինորն» անցկացնելն էր...

Ի վերջո եկան ընդհանուր եզրակացության։ Մատենադարանը Բիթլիսի այդ ձեռագիրը հոժարակամ «տալիս» է Սարոյանին։ Սակայն, քանի որ Սարոյանը չի կարողանալու այն «սինորի» վրայով անցկացնել, ուրեմն ձեռագիրը նորից մնում է Մատենադարանում, մինչև նրա նոր տերը կարողանա «գործը կարգադրել»։

Լևոն Խաչիկյանի դեմքին ժպիտ երևաց...

Այսպիսի մանրապատումներ ես կարող եմ էլի բերել, և, համարձակվում եմ ասել, դրանք կկարդացվեն մեծ հետաքրքրությամբ։ Եվ դա ամենևին էլ ոչ նրա համար, որ ես հրաշք-պատմող եմ կամ գերազանց եմ տիրապետում գրչի արվեստին։ Գրածներս կկարդացվեն անսքող հետաքրքրությամբ, որովհետև նրանց գործող անձը՝ Վիլյամ Սարոյանը շեշտված կերպով ինքնատիպ անձնավորություն էր, ¨ դա՝ ամեն տեղ, ամեն քայլափոխում, կյանքի ամենատարբեր իրավիճակներում։ Այդպիսին էլ նա մնաց բոլորիս հիշողության մեջ, այդպիսին էլ նա պիտի հիշվի տարիների ու դարերի հարահոս հոլովույթի ոսկեհյուս շղթայում։